



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

(առ/տր/)

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍԱ Ա.

2 ՄԱՅԻՍ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ա.

2 ՄԱՅԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖԷՆՏԻ

(Առժամեայ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Գրիգոր Եպիսկոպոս Բ.
2. Խորեն « Նար Պէժ
3. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց
4. Գարեգին « Թաթարեան Բ.
5. Խորեն « Կիրայեանց
6. Կարապետ « Սերոբեան
7. Հմայեակ « Դիմաքեան
8. Մատթէոս « Իզմիրլեանց
9. Յովհաննէս « Փափաղեան
10. Ներսէս « Ասլանեան
11. Արիստակէտ Բ. Մամբրեան
12. Գեորգ « Արծրունի Բ. Պ
13. Գրիգոր « Աճեմեան
14. Խորեն « Փէհլիվանեան
15. Յարութիւն « Սերոբեան Բ.
16. Յովհաննէս « Մկրեան
17. Սուքիաս « Ստեփաննոսեան
- 18.
- 19.
- 20.

ԱՏԻԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գոռնգալիտ, Կիտիկ փաշա ևն
Գոռնգալիտյի դոնրու

21. Բարթող Բիւրքճիպաշեան

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
- Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ :
- ՀԲ. Հրատարեալ :

22. Բարսեղ Հալաճեան Բ.
23. Գեորգ Ստիմարաճեան
24. Գրիգոր Պէրպերեան Բ.
25. Եսայի Անուխեան
26. Մանուկ Աբապեան Բ. Պ
27. Յակոբ Յրէնկեան Բ.
28. Պետրոս Քէրէսթէճեան Բ.
29. Պողոս Ժամակոչեան
30. Պողոս Ճիւղաճեան Բ.
31. Պողոս Պառնասեան
32. Ռուսինեան
33. Սենեքերիմ Մանուկեան Բ.
- 34.
- 35.
- 36.
- 37.

(Բ. Վիճակ)

(Բ. Վիճակ)

Պէշիքթաշ

38. Կարապետ Ս. Իւթիւճեան
39. Յարութիւն Մարգարեան
- 40.

Եկնիգալիտ

41. Խաչատուր Վազարոսեան
42. Կարապետ Գ. Փափաղեան Բ.
43. Համբարձում Իփեկճեան Բ.
- 44.

Իսկիկատար Ս. Խաչ

45. Յովսէփ Ս. Մալլաճեան Բ.
46. Սերոբէ Պասմաճեան
- 47.
- 48.

- Իսկիկատար Ս. Կարապետ
49. Միհրան Պաճաճեան
50. Յովհաննէս Ճիւղաճեան
- 51.
- 52.
- (Գ. Վիճակ)
- Բերու
53. Արիկ Ունճեան Բ.
54. Գրիգոր Սէլիմիճեան Բ.
55. Մարտիրոս Յ. Տիլեան
56. Միքայէլ Մամիկոնեան Բ.
57. Նշան Քաղաղեան Բ.
58. Ստեփան Խնդրեան
59. Տէրմաք Մ. Էքտերճեան Բ. Պ
- 60.
- 61.

Գոռնգալիտ փաշա

Միջագիկոյ

- 62.
63. Կարապետ Պ. Պերեանց
64. Յակոբ Կոստանդեան Բ. Պ
65. Յակոբ Պ. Նորատունկեան Բ. Պ
66. Տեգրան Եռուսէֆեան Բ.
- 67.

Պէշոգ ևն Ղալաթիա

68. Յարութիւն Մէրեթ—Գուլի
- (Գ. Վիճակ)
- Ղոզդղոնճոյ ևն Իմատիկ
69. Յովհաննէս Էստեան Բ.
70. Ստեփան Պէլիկճեան

Գատրգիւղ

71. Կարապետ Շահապետեան

72. Մկրտիչ Մուրադեան Բ.

Կարապետ

73. Յակոբ Եւսեփեան

Երեմիանայի Մանուկի

74. Օգոստէն Խոսրոսեան

Բարսեղեան

75.

Էդուարդ Մ. Երիսև և Մ. Աստուածատր

76. Գարեգին Յ. Մելիքեան Բ.

Գործակալ

77. Աստուածատր Իկրապետեան

Հասար և Պոյաճի գիւղ

78.

Կորնիլի և Մ. Երեմի

79. Ղազար Հովսեփեան

Պարս

80. Մկրտիչ Գ. Էսաեան Բ.

81. Յովհաննէս Կրճիկեան

82.

Քարապետեան

85. Յարութիւն Չենճերճեան

84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ

(Ե. Վիճակ)

Մանուկի

85. Աւետիս Բուրճեան Բ.

86. Եղիազար Մելիքեան Բ. Պ

87. Յակոբ Քաղապետեան Բ.

88. Կաղարէթ Շահապետեան

89.

90.

91.

92.

93.

94.

Խաչատր

95. Առաքել Ալթուն Տիւրք Բ.

96. Խաչատուր Պ. Միսաքեան

97. Ռեթեոս Պէլլիկեան

98. Սարգիս Արապեան

99. Սիմոն Միսաքեան

100.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Կարին

404.

Յիսիմիան

402. Մեծարդ Յ. Այվազեան Բ.

Արթուրեան

405. Ռուբէն Կիւրճիկեան Բ. Պ

Նիկոլայի

404. Տիգրան Կիւրճիկեան

Ալին

405. Պետրոս Միսաքեան Բ.

Հարսիսար

406.

Արարիկ

407. Կարապետ Խաչիկեան

Բաղեշ

408.

Պրոսպ

409. Բրիտանուր Ղազարեան

Երեմի

410.

Ամասի

411. Համբարձում Ալաճաճեան

Բարս

412. Յովհաննէս Ալաճաճեան Բ.

Երեմի

413.

Մանուկի

414.

Հանր

415.

Երեմի և Բարս

416.

Թերթրտայ

417. Տիգրան Գ. Սիմոնեան

Կեսարի

418. Մատթէոս Մ. Այվազեան Բ. Պ

Խաչատր

419. Յովհաննէս Երեմեան

Պարսիկ

420. Յովհաննէս Յովհաննէս

Մոնչ

124. Ստեփան Պ. Պ. Փափազեան

Տիկրիկ

122. Պոզոս Մովսէսեան

Չիլճուր և Մարաշ

125.

Տրապիզոն

124. Մկրտիչ Կիւրճեան

Պարսար

125.

Տիգրանեան

126. Թադէոս Թերթեան Բ.

Վան

127. Սիմոն Մարտիկեան Բ.

Աղթամար

128.

Հարիւր և Այվազ

129.

Մեքսուտի

150.

Ռոստոմ

154.

Կարս

152. Աբրահամ Յ. Այվազեան Բ.

Չիլճուր

155. Համբարձում Սարգիսեան

Գարսի

154.

Ատան

155. Սիմոն Պ. Նորատուրեան Բ.

Սրբեր

156. Մատթէոս Ալաճաճեան Բ.

157.

Մարաշ

158.

Իզմիր

159.

Երեմի

140.

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Բացում ժողովին և Նախագահին :
- Բ. Կարգում առժամայ դիւանին :
- Գ. Անկազմութիւն յետին նիստին :
- Դ. Վանքացում երեսփոխանական ընտրութեանց :
- Ե. Կազմութիւն Մայր դիւանին :

Ա.

Բացում ժողովին և Նախագահին :

Ամեն. Նախագահ Սրբազանը բացաւ զԱզգային ժողովը հետեւեալ ճառով .

Տեւրք երեսփոխանք Հայոց .

Յամենազօրն Աստուած եւ ի Ձեր ազգասիրութիւն ապաստան լի յուսով կը բանամ այսօր Ազգային ժողովը , մաղթելով որ Ձեր փորձառութեամբ եւ ջանիւք օրինապահութեամբ եւ միաբան ազգասիրութեամբ արդիւնաւորագոյն լինի ներկայ շրջանը :

Ազգային գործերն Վարչութեան համարատուութեամբ Ձեզ պիտի յայտնուին , Ձեր իմաստութեամբն պիտի կշռէք եւ գնահատէք զանոնք :

Այժմէն կարող եմ ըսել թէ յարաբերութեանց եւ ժողովոց կանոնաւորութեան եւ գործոց կարգադրութեան համար ոչ Ձեր կողմանէ , եւ ոչ մեր ու ժողովոց եւ խորհրդոց կողմանէ աշխատութիւն եւ ջանք չպակսեցան : Գաւառացի ազգայնոց կալուածական խնդիրներն , որ մեր նախորդներէն ժառանգած էինք , Բ. Գրան մատուցուելով յուսադրիչ խոստումներ տրուեցան : Բազումք ի կուսակալաց մեր մտերմական գրութիւններն ու շարքութեան առնելով , բաւական գործեր կատարել բարեհաճեցան :

Ազգային ելեւմուտքն շնորհիւ երկու բարերարաց , որ հին պարտքը վճարեցին , եւ զորս Ձեր շնորհակալութեան քուէովն մեծարեցիք , շնորհիւ Ձեր քուէարկած հանգանակութեան օրինաց , նա մանաւանդ շնորհիւ ա-

մէն ազգայնոց երբ ըստ օրինաց փութան իրենց պարտքը կատարել , կը յուսամ որ գոհացուցիչ վիճակ մը կառնու : Ձեզ ներկայանալի տարեկան պիւտճէով , պիտի տեսնէք զայս եւ ըստ այնմ դատէք :

Տեւրք երեսփոխանք , խորին եւ երախտագիտական շնորհակալութիւն կը մատուցանեմ Ձեզ , եւ ինձ գործակից ժողովոց եւ խորհրդոց այն լիտահութեան համար որով պատուեցիք զիս , դուք եւ նոքա , զի գիտեմ որ ես անարժան էի ատոր , քանզի իմ պակասութիւններս եւ սխալներս ամենէն աւելի ինձ յայտնի են : Ազգը գոհ ընելու համար աշխատելու կամք չպակսիր ինձմէ , բայց զլիսաւոր բան մը կը պակսի , առանց որոյ անկարելի է յարատեւութեամբ գործել ընդ ծանր պատասխանատուութեամբ , այն է կատարեալ առողջութիւն : Անցեալ տարի այս օրերն էր զիս Պատրիարք ընտրեցիք , աղաչեցի զՁեզ որ արժանաւորագոյն մը բարձրացունէք այս Աթոռին վրայ , չուզեցիք լսել , եւ ես հնազանդութեան փորձը ցցուցի : Այսօր իրաւունք ունիմ թախանձագին պաղատիլ Ձեզ , բաւական համարեցէք եւ հաճեցէք փութով ուրիշ մը ընտրելու փոխանակ իմ . ես պատրաստ եմ իբր մին ի վարդապետաց ազգիս , իմովսանն ծառայել , ինչպէս յառաջ :

Պատրիարքը ազգին ամենէն զօրաւոր գործին պէտք է ըլլայ , ես մաշած գործիք մ'եմ , առողջ միտք յառողջ մարմնի , կըսէ հին առածը :

Ճշմարիտն ըսելով՝ գլուխս թմրած է , եւ մտաց կորով չէ մնացած ի յիս , քանզի ամէն ատեններէ աւելի փափուկ է այս ժամանակս ,

ուստի եւ մեծ եւ հզօր հանճարով զլիսու, եւ յոյժ լայն եւ դիմացկուն սրտի գործ է ներկայ Պատրիարքութիւնը: Չայս կանխաւ գիտէի, կզգամ եւ այսօր, բայց ոյժ չունիմ տոկալու, արիւթիւն, համբերութիւն, եռանդեան զբարարուն, շրջանայեցութիւն, յարաժամ արթնութիւն, ի ժամու եւ տարաժամու վաղվադուին, կրակի վրայ շիջուցանող ջուր, անկենդանութեան վրայ բորբոքիչ հուր, լոյս, հոգի, սէր, խաղաղութիւն, ծեր, տղայ, դեղ, դարման, միսթարութիւն, օրինակ բարեաց, միով բանիւ ամենայն ինչ է Պատրիարքը: Ուրեմն կը խնդրեմ եւ կը պաղատիմ ընտրեցէք արժանաւորագոյն մը, որ գոնէ փոքր ի շատէ այս հանգամանքներն ունենայ:

Ձի մեք պարտիմք անդուլ անդադար բայց լուրջ եւ հանդարտ կերպով աշխատիլ յառաջ դիմելու. գիտնալու եմք որ անհուն պիտոյք ունիմք լեցնելու, մեր բարոյական մտաւորական եւ նիւթական վիճակաց բարեւոքումն անբաւ զոճողութեանց պէտք ունի: Մենք եկեղեցիներ, դպրոցներ եւ հիւանդանոցներ ունիմք, սակայն մեր այս ազգային հաստատութիւնք մեծամեծ բարեկարգութեանց, եւ անոնց ապահովութիւնքն մեծ ջանից կարօտ են: Ուսումը տարածելու մեծամեծ ջանքեր ընելու եմք, զի տակաւին տգիտութիւնը իւր անբաժանելի ընկեր թշուառութեամբ մեծամեծ նախճիրներ կը գործէ շատ տեղեր եւ գրեթէ ամէն տեղ: Ազգային դաստիարակութիւնը իւր խանձարոց մէջն է տակաւին, թէեւ ուսումնաբաններ ունիմք: Եկեղեցականաց բարեկարգութիւնն եւ նուիրակեցական դասակարգութիւնն որ հոգին է եկեղեցականութեան, տակաւին մեծ ճգանց կը կարօտին, թէեւ ուսեալ բարեկիրթ լեզուազէտ եւ սրբակրօն եկեղեցականներ ունիմք: Ունիմք ազգային Սահմանադրութիւն, օրինակորապէս ըստ Սահմանադրութեան ընտրեալ ժողովներ, Գաւառական ժողովներ, Արօնական եւ Քաղաքական ժողովներ, Ուսումնական Տնօրենական եւ Ելեւմտից խորհուրդներ, եւ այլն, թէ այս տեղ եւ թէ գաւառները, բայց դեռ բեղմնաւոր արդիւնքներ տեսնելէ բաւական հեռու ենք: Ունիմք, փառք Աստուծոյ, ողորմած դրամատէրեր, հարուստ եւ վեհանձն վաճառականներ, հանճարաւոր եւ ազգին պատիւ բերող անհատներ, սակայն անհամար ընտանիք եւ երիտասարդ անձինք թէ

աստ եւ թէ ի գաւառս, անգործութեամբ եւ նորա հետեւանք դառն աղքատութեամբ կը սուսայտին, եւ դեռ չեմք կարողացած ընկերութիւններ գործարաններ արհեստանոցներ կազմել կանգնել, որպէս զի գործ եւ կեանք մատակարարենք այդ տառապելոց: Թէեւ պէտք չէ մոռնալ որ այս տարուան ահագին սովէն նեղեալներուն ոչ սակաւ նպաստամատոյց եղան վեհանձն ազգայինք:

Ժամանակիս պիտոյքն եւ ապագային պահանջմունքն խիստ շատ են, պէտք չէ յաւակնիմք թէ մեր պարտքերն կատարած եմք, զի ամենուս ըրածն մի կտեղելով անհուն պիտոյից հետ բաղդատմամբ աննշան եւ աննշմարելի բան մը կը գտնեմք: Սակայն եւ ոչ ներելի է պղերգութեամբ եւ յուսահատութեամբ ձեռնկտուի լինիլ, անդադար աշխատելու ենք, բայց խոհեմութեամբ, եւ գիտնալու ենք որ ամէն բան խակոյն միատեղ չենք կրնար կատարել, բարձր դիրքէ մը ազգային ընդարձակածաւալ անմշակ դաշտը տեսնել մէկ ակնթարթի մէջ կարելի է, սակայն հոն արշաւել, քննել, մշակել, անոր ժեպուտ, քարուտ, մացառուտ, ճախճախուտ տեղերն արգաւանդահող ընելն հարկաւ կատարելագոյն գործիքներու, ապահով միջոցներու, բազում քրտանց, եւ երկարատեւ ժամանակաց կը կարօտի, քանզի գիտենք թէ արձակ ընդարձակ չէ մեր ընթացած ճանապարհը, թէ ինչ արգելքներ, քանի քանի գորաւոր շահերու ընդհարումներ, եւ այդ սաստիկ ընդհարումներ ինչ փշրուելու վտանգներ կան հոն: Ուստի մեր գործը կանոնաւոր յարատեւութեամբ եւ ոչ յախուռն անապարանօք յառաջ վարելու ենք:

Գիտէք որ անհամար վէրքեր ունիմք բուժելու, եւ ասոնց դէմ անհամար տեսական սպեղանիք, սակայն գիտէք նաեւ որ ասոնցմէ ազդողազոյնը որոշելն է գործը, զի այս երկիրը մանաւանդ տեսականին եւ գործնականին մէջ անհուն տարբերութիւն կայ. հատու գործիքին, ազդողազոյն տեղին ընտրութիւնը, գործոյ եւ վորձոյ արդիւնքն պիտի լինի. իմ գըլխաւոր երկիրս սոս է որ չըլլայ թէ ի խնդիր լաւագունին լաւը կորսնցնեմք: Մեր ծրագիրը կամ յատակագիրը պէտք է լինի, անուաճեցիլ փափաք միշտ ի յառաջադիմութիւն իրական, վաղվազկոտ եւ խիզախ յանդգնութենէ եւ մեռելատիպ թմրութենէ միանգամայն հաւասարապէս հեռանալ, առանց ժխտի ժամ առ ժամ զէպ ի լաւագոյնը նկրտիլ: Մեր ազգային քաղաքականութիւնը այսպէս կը հասկնամ, զոքուշաւոր, շրջանայեաց խոհեմ արիւթիւն, ձեռքերնիս ունեցածնիս վրայ շտալով վաստակի ետեւէ ըլլալ, միշտ գործել առաւել քան թէ խօսիլ, եւ ներկային աննպատակ գրգռութիւններէն խուսելով ասպագայն չմոռնանալ ի վաստակի արշաւը: Սահմանադրութիւնն ալ փոխենք եւ մենք զմեզ չփոխեմք, այսինքն նոր ոգի, նոր գործունէութիւն, հաստատուն կամք շահումաք, հազուատը միայն փոխելով ինքզինք քաղաքապետութիւնը մարդոց նմանած կըլլամք:

պէս հեռանալ, առանց ժխտի ժամ առ ժամ զէպ ի լաւագոյնը նկրտիլ: Մեր ազգային քաղաքականութիւնը այսպէս կը հասկնամ, զոքուշաւոր, շրջանայեաց խոհեմ արիւթիւն, ձեռքերնիս ունեցածնիս վրայ շտալով վաստակի ետեւէ ըլլալ, միշտ գործել առաւել քան թէ խօսիլ, եւ ներկային աննպատակ գրգռութիւններէն խուսելով ասպագայն չմոռնանալ ի վաստակի արշաւը: Սահմանադրութիւնն ալ փոխենք եւ մենք զմեզ չփոխեմք, այսինքն նոր ոգի, նոր գործունէութիւն, հաստատուն կամք շահումաք, հազուատը միայն փոխելով ինքզինք քաղաքապետութիւնը մարդոց նմանած կըլլամք:

Չեր սերտ միութեամբն մեր մէջ ազգային ոգին անթափանցելի եւ անխոցելի պահել, քաղցրահամ այլ փափուկ պտուղի մը պէս որ խիտ եւ կարծր կեղեւով շուրջ պատեալ անլրթար կը մնայ արտաքին փոփոխական օդոց ազդեցութենէն:

Այժմ հասկցած էք դուք, Տեարք երեսփոխանք, որ մեր այս պահպանակը, ուղեցոյցը եւ այլն, շնորհիւ Օսմանեան Պետութեան մեր ազգային Սահմանադրութիւնն է պատշաճ վերաքննութեամբն հանդերձ:

Մն ուրեմն, ժամ է արդ, նոր Պատրիարքի ընտրութեան հետ Ձեր Օրակարգին էն ծերագոյն եւ Ձեր նոր շրջանին մէջ էն կարեւոր եւ ազաւին դասուած խնդիրը լուծեցէք: Աններեւի է այլ եւս յասպակեցնել սորա լուծումը, այս հնգետասանամեայ փորձը եւ Ձեր Գիւանին վրայ գտնուած շատ մը դիտողութիւններ եւ ծրագիրներ զմեզ լուսաւորելով շուտով մը վախճան պիտի տաք անշուշտ այս գործին: Հարկ չէ ըսել թէ կանոնը որքան պարզութիւն ստանայ, այնչափ աւելի դիւրընտել կըլլայ. պէտք է որ համոզուելով վճռէք թէ գաւառներու եւ նոյն իսկ Պոսոյ մէջ գործադիր ժողովներն ու տեսուչ խորհուրդներն սակաւաթիւ անձինքներէ բաղկացած ըլլան, եւ գործադիր իշխանութեան միամիտակ ուխտեալ նախագահին արտօնութիւն տայք անգործադրելի կէտերն իսկոյն վերաքննութեան ենթարկելու:

Տեարք երեսփոխանք, Հայոց ժողովուրդը յոյսը ձեր վրայ դրած է, ամէն բան Պատրիարքէն, ձեզնէ, եւ Սահմանադրութենէն կըսպասէ, ծանր է ձեր եւ մանաւանդ Պատրիարքին պատասխանատուութիւնը, եւ ծանրագոյն պիտի ըլլայ եթէ իրաց վիճակը ընդ փոյթ ի

նկատի շահումաք, եթէ գրեթէ միահողոյն նոր ուխտ մը չընէք նոր ոգուով գործելու. զի եթէ Սահմանադրութիւնն ալ փոխենք եւ մենք զմեզ չփոխեմք, այսինքն նոր ոգի, նոր գործունէութիւն, հաստատուն կամք շահումաք, հազուատը միայն փոխելով ինքզինք քաղաքապետութիւնը մարդոց նմանած կըլլամք:

Ձեր երկրորդ եւ յոյժ կարեւորագոյն եւ մահու եւ կենաց խնդիրն ազգային դաստիարակութիւնն է. Սահմանադրութեան բարիքն պէտք է փայլեցնել, թաղական վարժարաններն, անոնց մատակարարութիւններն բարւոքելով, պիւտեմէն ընդարձակելով, կեղրոնական վարժարան հաստատելով, ուսմանց ծրագիրներն կատարելագործելով, եւ գաղափարները միացընելու համար դաստիարակութիւնը միակերպելով, նոր երկսեռ նախակրթարաններ, նոր երկրորդական վարժարաններ բազմացուցանելով, զի այդ դպրոցներն պիտի բուսցունեն մեզ բարեկիրթ ծնելաւէր մայրեր, եկեղեցւոյ արժանաւորագոյն պաշտօնեայնիս, Ազգային ժողովոց արթուն եւ ազգասէր անդամակիցներ, եւ լուսամիտ գործունեայ եւ պատուական եւ իւր գործը շինելու կարող ժողովուրդ: Երբ այսպէս բարեկարգ դպրոցներ, բարեկարգ վանքեր, վարժապետանոցներ, արհեստանոցներ եւ այլն ունենանք, երբ Ազգին եւ Տէրութեան պիտանի քաղաքացիներ սկսին ելնել մեր դըպրոցներէն, այն ատեն Սահմանադրութիւնը մեռեալ տառ մը չմնալով իւր արդիւնքը ցցուցած, եւ Տէրութեան եւ Ազգին մէկ խիստ պատուական օրինագիրքն եղած կըլլայ եւ Ձեր անունն ալ ապագայ սերունդէն օրհնուելով կօրհնուի, ոսկեղէն տառերով զրոշմուելով մեր պատմութեան մէջ:

Երեսփոխան Տեարք, պէտք է յիշենք նաեւ որ այսօր հնգետասանամեայ Սահմանադրութեան Տարեդարձի ամսոյս երկրորդ օրը այս ժողովոյս բացման ատեն, այս հանդիսաւոր վայրկենիս, մեր ամենուն պարտքն է բարեբաստիկ երկայն աւուրս մաղթել մեր օգոստափառ Այսսեր, որոյ հովանաւորութեամբը մեր կրօնը կը պաշտեմք, մեր լեզուն կը մշակեմք, մեր տղաքը ազգային ոգուով կը կրթենք: ու եկեղեցւոյ եւ Ազգին գործերն կը վարենք ըստ Սահմանադրութեան. Օսմանեան վեհապետաց հովանին բարիք մ'եղած է մեր Ազգին, կեցցէ ուրեմն Օգոստափառ Ինքնակալն մեր ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ԱՂԻՁ-ԻՍԱ:

(Երեսփոխանք միաբերան կեցոյ՛ կարգ գոչեցին) :

Վերջացնելով խօսքս , զՁեզ Տեսրք Երեսփոխանք , Աստուածային պաշտպանութեանը յանձնելով կը մաղթեմ որ իմաստութիւն Հօր Յիսուս , Բանն Աստուծոյ հաճեցի վարել Ձեր բանավարութիւնը յուղիղն եւ յօգտակարն , եւ Հոգին Սուրբ , հոգի սիրոյ , հանճարոյ եւ խորհրդոյ եւ միութեան սաւառնելով Ձեր մտաց վրայ , տածէ եւ լուսաւորէ Ձեր խորհուրդներն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս . Ամեն :

Երեսփոխանք ծափահարութեամբ եւ միաբերան ձայնեցին՝ կեցոյ՛ Ս. Պարբերք :

Բ.

կարգուած արձակուոյ Գիտնի :

Նախագահ Սրբազանին հրաւիրանօք երիցազոյն Երեսփոխաններէն Ռուսինեան էֆէնտի առժամեայ ատենապետ բազմեցաւ , եւ կրտսերագոյններէն Ալաճաճեան էֆէնտի՝ առժամեայ ատենադպիր :

Ատենապետն անմիջապէս ատենը բացաւ ժամը 7 ին ի ներկայութեան 46 Երեսփոխանաց , որոց վերջին թիւը 55 ի հասաւ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Դեռ գործի չձեռնարկուած կը խնդրեմ Ատենապետ էֆէնտիէն որ բարեհաճի պատասխանել Նախագահ Սրբազան Հօր թէ ժողովն իւր մէջ բերած հրաժարականի մասը չընդունիր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանուն ժողովին շնորհակալ եմ Սրբազանին խօսած այն գեղեցիկ ձառէն՝ որ ամեն մասամբ ազգասիրական ոգիէ ներշնչեալ է , ի բաց առեալ հրաժարականի մասը՝ զոր ըստ իս երբէք չեմ կրնար ընդունիլ զիտեմ ոչ ոք այս ժողովէն , կարծեմ եւ ոչ իսկ ժողովուրդէն կրնայ երբէք ոք ընդունիլ :

(ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Երբէ՛ + , Երբէ՛ +)

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՂ. — Պէտք է գիտնալ թէ ծառայութեանէ փախչելու համար չէ որ կը հրաժարիմ . իմ ցուցած պատճառս մեծ է , անձնական տկարութիւնը՝ զոր արդէն անցեալ տարի ալ յայտնած էի , եւ որ այժմ վերջին աստիճան կ'ստիպէ զիս հրաժարելու :

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Ինչպէս որ անցեալ տարի մտիկ չըրինք , նոյնպէս այս տարի ալ չենք ընդունիր այդ պատճառը :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Յանուն եկեղեցականաց՝ որ ժողովոյս մէջ ներկայ են , եւ ի դիմաց անդամակցացս կրօն . ժողովոյ՝ շնորհակալութիւն կը յայտնեմ մեր Ամեն Սրբազան Պատրիարքին . արդէն ամենուն ծանօթ էին իւր աշխատութիւնն ու ազգասիրական ոգին բայց այս Պատրիարքութեան շրջանին մէջ այնպէս փայլեցաւ որ եթէ ծանօթ չեղողներ ալ կային՝ կատարելապէս ճանաչեցին եւ համոզուեցան : Մեծ շնորհ կը համարիմ որ Ազգին ղեկը յանձնուեցաւ այնպիսի առաքինազարդ եւ ուսումնասպերճ անձի մը , որ կարող եղաւ զժուարին ժամանակի մը մէջ պաշտօն վարել եւ Ազգը դէպ ի խաղաղութիւն առաջնորդել , այնպէս որ այժմ իւր հրաժարականին ընդունելութիւնը այնպիսի ալեկոծութեանց մէջ կը ձգէ ազգին վիճակն՝ որոյ հետեւանքը կրնայ դառնաղէտ ըլլալ : Յիրաւի առողջութեան պակասութիւնն ամենքս ալ գիտենք . բայց ոչ ապաքէն եկեղեցւոյ աղօթքն օգնութեան կը հասնի : Ազգը կը բաղձայ որ Ձեր Սրբազանութիւնը տակաւին շարունակէ այն ծանր եւ միանգամայն ազգանուէր պաշտօնը , որոյ մէջ տուիք գեղեցիկ կանոնադրութիւն մը Ազգային ժողովոյս : Ուստի ի դիմաց եկեղեցական դասուն մենք եւս կը խնդրենք որ շարունակէք այդ պաշտօնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եկեղեցական եւ աշխարհական Երեսփոխանք միաբերան կ'առաջարկեն որ Ձեր Սրբազանութիւնն ետ առնու իւր հրաժարականը :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՂ. — Կ'աղաչեմ եւ կը պաղատիմ որ ընդունիք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազանին թախանձանաց յանուն Ազգին կը պատասխանէ ժողովը , եւ Սրբազանը չ'ընդդիմանար Ազգին յայտնած կամացը . ուստի միջադէպը կանոնաւոր կերպով բառնալու համար քուէի կը դնեմ այդ հրաժարման խնդիրը եւ քաջ գիտեմ որ ոչ ոք պիտի ընդունի :

Չայս ըսելով Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ , եւ ժողովը միաձայնութեամբ ԶՆԳՈՒՆՅՍ Սրբազան Պատրիարքին հրաժարականը :

Գ.

Արեւելոսէն յեղին շէպին :

Ատենապետ էֆէնտին նախընթաց շրջանին յետին նիստին ատենադրութեան վրայ ի դիտո-

Դ.

Վարչութեան Երեսփոխաններէն ընտրուածները :

Երեսփոխանական նոր ընտրութեանց մասին Վարչութեանէն եկած տեղեկագրով կարդացուեցաւ , որոյ պատճէնն ահաւասիկ :

Վսեմաշուք Ատենապետ : Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

Պալատու թաղին հրաժարեալ մէկ Երեսփոխանին տեղ նորոգ ընտրութիւն կատարելով ընտրողական ժողովն իւր տեղեկագրով կը յայտնէ թէ թաղին 124 ընտրողներէն 35 ին մասնակցութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուած է

Ասատուր էֆէնտի Գուշատալեան :

Օրթաղիւղի թաղին հրաժարեալ մէկ Երեսփոխանին տեղ նորոգ ընտրութիւն կատարելով ընտրողական ժողովն իւր տեղեկագրով կը յայտնէ թէ թաղին 149 ընտրողներէն 29 ին մասնակցութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուած է

Յովհաննէս էֆէնտի Աղայէկեան :

Պէշիկթաշի թաղին հրաժարեալ մէկ Երեսփոխանին տեղ նորոգ ընտրութիւն կատարելով ընտրողական ժողովն իւր տեղեկագրով կը յայտնէ թէ թաղին 277 ընտրողներէն 69 ին մասնակցութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուած է

Բարսեղ էֆէնտի Հալաճեան :

Իւսկիւտարի Սէլամիյէ թաղին պակասած երկու Երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւն կատարելով ընտրողական ժողովն իւր տեղեկագրով կը յայտնէ թէ թաղին 235 ընտրողներէն 78 ին մասնակցութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուած են

Ատեփան փաշա Աւանեան , Յովհաննէս էֆէնտի Շահեան :

Ենի-գարուի թաղին պակասած մէկ Երեսփոխանին տեղ նորոգ ընտրութիւն կատարելով ընտրողական ժողովն իւր տեղեկագրով կը յայտնէ թէ թաղին 187 ընտրողներէն 129 ին մասնակցութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուած է

ղութիւն հրաւիրեց Երեսփոխանները . սակայն զիտողութիւն ընող չըլլալով քուէի գրուեցաւ եւ միաձայնութեամբ ԸՆԳՈՒՆՈՒՆՅԱՆ ատենադրութիւնը :

Ատենապետ էֆէնտին յաջորդ խնդրոյն չանցած՝ թղթակցութիւնն հաղորդեց ժողովին Նախ՝ անձնական տկարութեան պատճառաւ այսօրուան նիստէն բացակայ մնալու ստիպեալ քանի մը Երեսփոխանաց անունները ծանոյց ժողովին , որք են

Յարութիւն պէյ Տատեան Եղիազար էֆէնտի Մելիքեան

Երկրորդ՝ ճամբորդութեան պատճառաւ ժամանակ մը մայրաքաղաքէս բացակայ մնալու ստիպեալ երկու Երեսփոխանաց նամակները կարդաց , որք են

Յակոբ էֆէնտի Կոստանդեան Տելեմաք էֆէնտի Էնքսէրճեան

Երրորդ՝ Գաղաքական ժողովէն եկած նամակ մը ներկայացոյց , որ կարդացուեցաւ . ահաւասիկ պատճէնը :

Վսեմաշուք Ատենապետ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

Ազգային Վարչութեան Գաղաքական ժողովս , որ պատկառելի ժողովոյդ կողմէ 1875 Նոյեմբեր 25 ին ի պաշտօն կոչեցաւ , իւր համարատուութիւնը պատրաստելով պիտի մատուցանէ պատկառելի ատենիդ . եւ իւր պաշտօնավարութեան շրջանը մինչեւ ամսոյս վերջը լրացուցած համարելով կը փութայ այժմէն խնդրել պատկառելի ժողովէդ , որ բարեհաճի ժամ յառաջ մեր յաջորդին ընտրութիւնը կատարել , որպէս զի վարչական գործերը անխնամ չը մնան :

25 Ապրիլ 1875 Ի Երեսփոխանական Վարչութեան Գաղաքական ժողովոյ Արեւելոսէն Ս. ՄԱՐԿՈՒՆԵԱՆ Արեւելոսէն Ս. ՄԱՐԿՈՒՆԵԱՆ

Սոյն նամակին ընթերցումէն ետեւ Ատենապետ էֆէնտին յայտնեց թէ այս խնդրոյն վրայ այսօր ժամանակը չէ խօսելու , կը մնայ Նախաքննիչ դիւանաց կազմութենէն ետեւ :

Մարուզէ էֆէնտի Ֆրէնկեան :

Քաղաքական ժողովս սոյն ընտրութեանց օրինաւորութիւնը Գործադիր Յանձնաժողովոյ քննութեամբ ստուգելէ ետեւ կը հաստատէ , եւ ընտրելոց յանձնառութիւնն ալ ապահովուած ըլլալը յայտնելով ներկայ տեղեկագիրս կը մատուցանէ պատկառելի ժողովոյդ ի վաւերացումն :

1 Մայիս 1875 Ի դիմաց Ազգ. Վարչ. Քաղ. ժողովոյ

Առեւ-դուրէ Է. Առեւ-դուրէ Մ. ՄԱՏԹԵՆՈՍԱՆ ԿԱՐԱՊԵՏ Գ. ՓԱՓԱՋԱՆ

Սոյն տեղեկագրին վրայ Ատենապետ էֆէնտին ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները : Դիտողութիւն ընող չըլլալով քուէի դրուեցաւ , եւ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱԻ :

Ատենապետ էֆէնտին երեսփոխան հռչակեց :

- Աստուր էֆէն. Գուշատայեան
- Յովհաննէս » Աղայեկեան
- Բարսեղ » Հալաճեան
- Ստեփան փաշա Արսլանեան
- Յովհաննէս էֆէն. Շահեան
- Մարուքէ » Ֆրէնկեան

Ե.

Կառնութիւն Մայր Դպրատան :

Ատենապետ էֆէնտին ծանոյց ժողովին որ Օրակարգին համեմատ Մայր դիւանին կազմութեան պիտի ձեռնարկուի եւ ընտրութիւնը կատարուի ըստ 3 դ. յօդուածոյ Կանոնադրութեան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Դիտել կուտամ ժողովին թէ պակաս ձեռնարկանաց ընտրութիւնները դեռ ամբողջապէս կատարուած չեն . երեսփոխանական ընտրութեանց տեղեկագրին որ պահ մը առաջ կարդացուեցաւ , պակաս ձեռնարկանաց մէկ փոքր մասին ընտրուած ըլլալը միայն կը յայտնէ . մենք յունվար 31 ի նիստին մէջ ուղեցրինք որ թէ վիճակաւ դադարեալ եւ թէ հրաժարեալ եւ դեռ չընտրեալ երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնք մինչեւ տարեկուս կատարուին , ինչպէս որ Ազգ. Սահմանադրութիւնն ու ժողովոյս Կանոնադրութիւնը կը տրամադրեն :

Արդ , քանի որ նոր ընտրութիւնք դեռ ամբողջացած չեն , ինչպէս կրնանք Դիւանին ընտրութեան ձեռնարկել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ընտրութեանց մասին Քրիստոստուր էֆէնտին ըրած դիտողութեան պատասխանը Դիւանս չը կրնար տալ , այլ Վարչութեան անդամոց կը վերաբերի պատասխանել : Իսկ մեր գործն է այժմ Մայր դիւանին կազմութեանը ձեռնարկել : Կանոնադրութեան 34 յօդուածին մէկ պարբերութիւնը կըսէ թէ « Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ անմիջապէս նորընտիր երեսփոխաններն եթէ ունկընդաց մէջ են , գալ տեղ առնուլ եւ բազմիլ . » եթէ չեն , յատուկ նամակաւ կը ծանուցանէ « իրենց ընտրութեան վաւերացումը եւ կը հրաւիրէ զանոնք յաջորդ նիստին ժողովին « աշխատութեանց մասնակցիլ . . . » :

« Անմիջապէս կը ձեռնարկուի Մ. Դիւանին կազմութեան , եթէ ժամանակն ներէ եւ « ժողովն ուղէ . եթէ ոչ՝ ուրիշ օրէն վերստին « կը գումարվի նիստն ի ներկայութեան նորընտիր անդամոց . . . » :

Կանոնադրին սոյն տրամադրութեան դիտաւորութիւնը սա է թէ՛ տարեկան կամ ընդհանուր ընտրութեամբ շատ մը նորընտիր անդամք կ'աւելնան , անոնք ալ կարենան մասնակցիլ Դիւանին ընտրութեան կամ անոնցմէ ալ կարենայ առնվիլ Դիւանի անդամ . ասոր համար է որ 3 օր սպասելու թոյլտուութիւն տրուած է : Նաեւ էֆէնտին ձեռնարկելու ժողովն ուղէ , ըսած է . հիմա ժամանակը կը ներէ , բայց ժողովը կուղէ . անոր համար պիտի հարցնեմ ժողովին թէ կուղէ արդեօք Մայր դիւանին ընտրութիւնը այսօր կատարել , թէ՛ 3 օր ետ թողուլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Կարծեմ թէ իմ ըրած դիտողութիւնս աղէկ մը չը հասկցուեցաւ , ուստի հարկ է ինձ պարզաբանել : — Մայր եկեղեցւոյ Գումգափուի եւ Կէտիկ փաշայի միացեալ թաղից 17 երեսփոխաններն Ա. վիճակաւ դադարած ըլլալով , անոնց տեղ դաւիք երեսփոխանները մինչեւ ցարդ պէտք էր ընտրուած ըլլային . սակայն այդ ընտրութիւնն ետ մնացած է : Այժմ որ նոյն դադարեալ երեսփոխաններէն շատերը բազմած են հոս , եթէ Դիւանի ընտրութիւն կատարուի , թէ ապաքէն քուէնիս անոնց վրայ կրնայ տարածուիլ , եւ եթէ անոնցմէ ալ Դիւանի անդամ ընտրուող-

ներ ըլլան . ինչպէս կըլլայ այս , քանի որ անմիջապէս պիտի գաղթին իրենց պաշտօնէն : Արդէն 5 ամիս առաջ Տեղեմաք էֆէնտին առաջարկած էր որ նոր ընտրութիւնք ժամանակին կատարուին . եւ եթէ կատարուած ըլլային , այժմ այս անտեղութիւնը չէր պատահէր : Ուստի կառավարիւմ որ Դիւանի կազմութիւնը մնայ առ այժմ մինչեւ երեսփոխանական ընտրութիւններն աւարտին :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Կը ձայնակցիմ Քրիստոստուր էֆէնտին :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ.— Թէ եւ Կանոնադրութիւնը կը տրամադրէ որ Դիւանին կազմութիւնն 3 օր ետքը մնայ , որպէս զի նորընտիր երեսփոխանք ալ ներկայ գտնուին . բայց որովհետեւ տեսնուեցաւ որ 3 օրը բաւական չը պիտի ըլլայ երեսփոխանական ընտրութեանց աւարտման համար , եւ որովհետեւ ըսուեցաւ որ դադարեալ երեսփոխաններ կան , որոնցմէ եթէ մէկը կամ մէկ քանին Մայր դիւանի անդամ ընտրուին , հաւանական է որ նոյն պաշտօնէն անմիջապէս գաղթելու ստիպուին , երբ իրենց տեղ նոր երեսփոխաններ յաջորդեն , եւ այս արդարութեան համաձայն չ'է , ուստի ես ալ այն կարծիքէն եմ որ մինչեւ նոր ընտրութիւնք չը լրանան եւ ժողովը իւր օրինաւոր ամբողջութիւնը չըստանայ , պէտք է որ Մայր դիւանը կազմուի . արդարութիւնն ալ այսպէս կը պահանջէ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Մայր դիւանին կազմութիւնն առկախելու համար եղած առաջարկութեան ձայնակցելուս վրայ սա դիտողութիւնս ալ կը յաւելցնեմ , որ երեսփոխանական ընտրութիւններն անյապաղ կատարուելու համար պէտք եղած ջանքը տարուի , որպէս զի ժողովն անգործութեան չը դատապարտուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Վարչութեան պարտքն է այդ , եւ անոր կ'ընկնի այդ պատասխանատուութիւնը :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Մայր դիւանին կազմութիւնն երկարաձգելու մասին եղած պատճառաբանութիւնը՝ զոր Խորէն Սրբազան եւ ուրիշներ յառաջ բերին , որչափ ալ իրաւացի դատուին , սակայն անոր հետ մէկտեղ սա ալ նկատողութեան առնուլ հարկ է որ այսքան տարուան փորձառութեամբ հասկցուած է թէ երեսփոխանական ընտրութիւնք միշտ երկար կը տեւեն . ասոր պատճառն ուրիշ բան չ'է :

բայց եթէ ընտրողաց իրենց պարտուց կատարման մասին ցուցած անտարբերութիւնը , այս ըսածիս նոր սպաւոյց մ'է հիմակուան կարգացուած ընտրական գործողութեանց տեղեկագիրը , որմէ կը տեսնենք որ ընտրողաց 10էն 2ը հազիւ մասնակցած են քուէարկութեան : Այս նկատմամբ Մայր դիւանի կազմութեան երկարաձգումն այնպիսի գործողութիւն մըն է , որ ներքիլ չէ կարծեմ , վասն զի Ազգին կարեւոր գործոց ետ մնալուն պատճառ պիտի ըլլայ : Նեւտեւապէս կ'առաջարկեմ որ Մայր դիւանին ընտրութիւնն այսօր կատարուի , քանի որ ժողովին ժամանակը կը ներէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Կը ձայնակցիմ Շահպաղեան էֆէնտին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ըսել է թէ երկու կարծիք կայ ժողովին մէջ . քուէն է որ պիտի լուծէ եւ որոշէ այս խնդիրը . եթէ դիտողութիւնք սպասած են եւ ուրիշ խօսք խնդրող չը կայ , քուէի պիտի գնեմ երկու առաջարկութիւնները :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ.— Շահպաղեան էֆէնտի գիտողութեան սա կարծ պատասխանը պիտի տամ թէ ունինք առժամայ ընտիր ատենապետ մը , որոյ ազգասիրութեան վրայ վրստան ենք եւ տարակոյս չունինք՝ որ ժողովին գործոց երբէք մնաս 'ը չը դար :

Տ. ՄԱՏԹԵՆՈՍ Վ.— Մայր դիւանին ընտրութիւնը պակաս ձեռնարկանաց ընտրութեան յապաղման պատճառաւ յետաձգելը ժողովն անգործութեան դատապարտել է . վասն զի գիտնալ պէտք է նախ թէ ժողովոյս ներքին Կանոնադրութիւնը չ'արդելուր այս ընտրութիւնը կատարեն , այլ ժամանակին ներելուն եւ ժողովին կամացը կը թողու , եւ երկրորդ թէ յառաջիկայ նիստին ալ չը պիտի կրնանք Մայր դիւանին ընտրութիւնը կատարել , եւ միայն նոր ընտրութիւններ վաւերացնելու համար պիտի նիստ ընէ ժողովը , եւ քանի որ այսպէս ներքին Կանոնադրութեան տարբեր բացատրութիւն տալով նոր ընտրութեանց վաւերացման համար Դիւանի ընտրութիւնը յետաձգել կ'ուզուի , ինչ հարկ կար ուրեմն ժողովն այժմէն բանալու անգործութեան դատապարտել զայն :

Արդ , որովհետեւ ժամանակը կը ներէ եւ Կանոնադրութիւնը կ'օրինադրէ , կ'ըսեմ թէ պէտք է Դիւանի ընտրութիւնն այսօր կատարել եւ ժողովն անգործութեան դատապարտելէ ազատել :

Տ. ԱՄԲԲՈՍԻՈՍ Վ. — Կը ձայնակցիմ Մատթէոս վարդապետին : ... ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Նոյնպէս եւ ես կը ձայնակցիմ :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ. — Իմ ըսածէս չը հեռեւեր թէ ներկայ անժամեայ Գիւանին վրայ անվտանգութիւն ունինք . ընդհակառակն ամենուս վտանգութեանն արժանի են Գիւանը բազմողները : Իմ ըսածս սա է թէ ինչ որ Օրէնքը կը տրամադրէ , դայն պէտք է ի գործ դնել եւ չէ թէ գոհողութիւն ընել . վասն զի Օրինաց արամադրութիւնը գոհել կրբէք ներելի չէ : Մայր դիւանին կազմութեան յետաձգութեան մասին Օրէնքն Յ օր միայն միջոց տուած է եւ ոչ աւելի . ուստի Օրինաց արամադրութիւնէն պէտք չէ շեղիլ . ուրիշ բան է թէ մեք առժամեայ Գիւանին վրայ վտանգութիւն ունինք եւ չնորհակալ ենք իրմէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կասկած յայտնող կայ իրր թէ ընտրողաց կողմէն զանցառութիւն կ'ըլլայ եւ չեն ընտրեր իրենց երեսփոխանները . այս կասկածն անտեղի է . որովհետեւ երբ ընտրութեանց գործադիր Յանձնաժողովին յանձնարարութիւն ըլլայ որ մնացեալ ընտրութիւնները մինչեւ դալ շարթու կատարել տալու համար ինչ որ պէտք է ի գործ դնէ , այն ատեն ամենն ալ կը հնազանդին եւ ոչ ոք դէմ կը կընայ : Ես կ'ըսեմ թէ պէտք է երեսփոխանաց ամբողջութեանն սպասել . որպէս զի դուրս չը մնան այնպիսի անձինք որ Մայր դիւանին անդամ ընտրուելու արժանաւորութիւն ունին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այս տեսակ պահանջումներ չըլլալու համար ժողովը կանոնադրութիւն մը հաստատած է արդէն . կանոնադրութիւնն Յ օր միայն միջոց կուտայ . եթէ մինչեւ Յ օր ամեն բան պատրաստ պիտի գըտնենք , թողունք . բայց գիտենք որ չը պիտի լինայ Յ օրուան մէջ , եւ քանի որ այսօր ժամանակինս կը ներէ , ինչո՞ւ թողունք . պէտք է որ անմիջապէս Գիւանին կազմութեանը ձեռնարկենք :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ. — Քրիստոստուր էֆէնտիի առարկութեան , որ ըսու թէ թաղ . խորհրդոց ազգու հրահանգներ զրկուին երեսփոխանական ընտրութիւններն Յ օրուան մէջ կատարելու համար , կը պատասխանեմ թէ թաղ . խորհուրդները չեն ընտրութեանց արգելք եղողներն . այլ հասարակութիւնն է որ

իր պարտքը կատարելու չը փութար ընտրութեանց մասնակցելով : այնպէս որ մէկ թաղի մէջ երբ 150 ընտրողաց հրաւէր կ'ուղղուի , անոնցմէ 10 միայն կը մասնակցին եւ միւսներն անտարբեր կը մնան . որով ընտրութիւնը փոխանակ մէկ անգամով լինալու համեմատական քուէարկութեան կը մնան : Բայց ինչ կրնանք ընել այս պարագային մէջ քանի որ ժողովրդեան կամքէն կախեալ է . չենք կրնար ժողովուրդն ստիպել իւր ընտրական իրաւունքը գործադրելու : Գալով Մայր դիւանին կազմութեան խնդրոյն , ըստ որում կարծիքները տարաբաժանուած են եւ տարբեր առաջարկութիւններ կ'ըլլան , պէտք է ինչպէս որ սովորութիւն է այսպիսի պարագայից մէջ , ժողովին կամացը դիմել , եւ եթէ մեծամասնութիւնն որոշէ Գիւանին կազմութիւնն այսօր կատարել , խնդրը կը վերջանայ :

ՄԵՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այն երեսփոխաններն որ Օրէնքին վրայ յենլով Գիւանին ընտրութեան այսօր կատարուելը կառաջարկեն , իրաւունք ունին . այսու ամենայնիւ ոչ նուազ իրաւացի կը թուի ինձ նաեւ Քրիստոստուր էֆէնտիի այն դիտողութիւնը , զոր խորէն Սրբազան ալ կրկնեց . եթէ սխալ հասկցած չեմ , Քրիստոստուր էֆէնտիին ըսել ուզեց թէ վիճակաւ դադարեալ երեսփոխանաց տեղ սկսուած նոր ընտրութիւնները չը վերջացած եւ չը վաւերացուած Մայր դիւանի կազմութիւնն ի գործ դրուելէն անտեղութիւն կը ծագի . զի կրնայ պատահիլ որ անոնցմէ ալ Գիւանի անդամ ընտրուողներ լինին եւ ընտրութիւններն յետոյ ոչնչանայ : Այս դիտողութիւնն ինչպէս արդէն ըսի՝ իրաւացի է , սակայն եթէ ինչպէս ըսողներ եղան , Գիւանի կազմութիւնն երկարաձգել ուղղուի մինչեւ այն ատեն որ ժողովը իւր ամբողջութիւնը գտնէ , ատի տարապայման է եւ չը կրնար ըլլալ . վասն զի անկարելի է որ երեսփոխանութեան 140 թիւն ամբողջանայ : Ուստի կառաջարկեմ որ Մայր դիւանի կազմութիւնը միայն Յ օր ետ ձգուի , եւ այս Յ օրուան մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւններն ալ վաւերացուին , եւ օրէնքն ուրիշ անգամ վէճի տակ չը դրուի այս պատճառաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անոնք որ Յ օր ժամանակ կուղեն Մայր դիւանին կազմութեանը համար , անզգալաօլէս կը սխալին մէկ կէտի մը

մէջ . Յ օրէն ետեւ ընտրեալ երեսփոխանք ոչ թէ հոս պիտի գան բազմին , եւ քուէ չունին , այլ անոնց ընտրութեան վաւերացումը պիտի ըլլայ . ուստի այս Յ օրին վրայ խօսք ընելն աւելորդ է :

ՄԵՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ատենապետ էֆէնտիին կը պատասխանեմ թէ մեր խօսքն Յ օր ետ ձգելու մասին՝ քուէնիս նորընտիր երեսփոխանաց վրայ ալ տարածելու համար է՝ ասկէ՛ զատ կանոնադրութիւնը կը տրամադրէ որ նորընտիր երեսփոխանք թէ որ ունկնդրաց մէջ գտնուին՝ Նախագահ Սրբազանին հրաւիրանքն անմիջապէս կը բազմին իրենց տեղը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կեմ գիտեր թէ Գիւանի կազմութիւնը յետաձգել ուղղուելուն ինչ վաստ կամ պատճառ կայ , իսկ Շահապեան էֆէնտիի՝ որ երեսփոխանական ընտրութեանց յապաղման պատճառ հասարակութիւնն է կըսէ , եւ ոչ թաղական խորհուրդները , կը պատասխանեմ թէ իմ գիտցածներէս Մայր Եկեղեցւոյ Թաղ . խորհուրդն երեք անգամ իրարու վրայ ազդարարութիւն ընդունած է թաղին երեսփոխաններն ընտրելու համար , եւ տակաւին ընտրութեան ձեռնարկած չէ . նոյնպէս Սամաթիոյ Թաղ . խորհուրդն ամբողջ ընտրելոց հաճութիւնը դեռ եւս չը կրցաւ առնուլ : Գալով այն խնդրոյն թէ Մայր Գիւանին կազմութեանն այսօր ձեռնարկելու ենք թէ չէ . ըստ իս ձեռնարկելու ենք . վասն զի եթէ այսպէս չընենք , սկզբամբ ընդունած պիտի ըլլանք , թէ ժողովը կը հարկադրի ընդմիջել իւր աչխատութիւնները , երբ երեսփոխանական ընտրութիւնը կատարուելու վրայ են : Արդ՝ քանի որ այսօր ժամանակը կը ներէ , պէտք է ընտրել Գիւանին անգամները :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ — Այս կէտին մէջ մէկ դժուարութիւն մը կայ ըստ իս . եթէ լուծուի այն խնդիրն ինքնին կը վերջանայ , վասն որոյ սա հարցումը կրնեմ . արդեօք կան երեսփոխաններ՝ որ պաշտօնէ պիտի դադրին . . .

ՁԱՅՆԵՐ — Այո՛ , կան :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ . — Եթէ կան եւ պիտի դադրին , ինչպէս կրնայ անոնցմէ Գիւանի անդամ ընտրուիլ . եւ եթէ ընտրուին եւ նորէն դադրին , ինչ զիրք պիտի ունենայ ժողովս անոնց նկատմամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կանոնադրութիւնը լուծած է այդ կէտը :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Դիտողութիւն կըլլայ , որ վիճակաւ դադարեալ երեսփոխաններէն Գիւանի անդամ ընտրուողներ կրնան ըլլալ , եւ եթէ ընտրուին ու յետոյ նորէն դադրին , այն ատեն անոնց իրաւունքը բռնաբարուած կըլլայ : Ուստի կառաջարկեմ որ երեսփոխանական ընտրութիւններն աւարտին եւ յետոյ Մայր դիւանին կազմութեանը ձեռնարկուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ոխալ ըմբռնում մը կայ մասնաւորաց ընտրութեան համար . վերջապէ՞ս կանոնադրութիւնն ըսած չէ որ երեսփոխանաց ամբողջութիւնը լրանայ եւ ապա Գիւանն ընտրուի . այլ տարեգլխին վիճակաւ դադարելոց տեղ շատ մը նոր անգամը պիտի ընտրին , անոնք մասնակից ընելու համար է նոր Գիւանին ընտրութեան , որ Յ օր միջոց տալ տրամադրած է , եւ ասի ալ ժողովին կամացը թողած է :

ՁԱՅՆԵՐ . — Շատ աղէկ , քուէի՛ դրէք . թող ամեն ոք իւր կամքը յայտնէ :

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կանոնադրութիւնը Մայր դիւանին կազմութեանէն առաջ ընտրուած երեսփոխանաց վրայ խօսելու ատեն կ'ըսէ թէ ընտրութեանց տեղեկագիրներն Օրակարգը պիտի գտնուին Գիւանին կազմութեան հետ . ըսել է որ ընտրութիւններն առաջնութիւն ունին . ես կանոնագրին սոյն արամադրութեանէն այնպէս կը հասկընամ թէ պէտք է նորընտիր երեսփոխանները ներկայ գտնուին Մայր դիւանին ընտրութեան մասնակցելու համար . վասն զի կ'ըսէ թէ անոնք եթէ ունկնդրաց մէջ են , կը հրաւիրուին անմիջապէս բազմիլ . եւ եթէ ներկայ չ'են՝ նամակաւ կը հրաւիրուին յաջորդ նիստին ներկայանալու : Զը գիտեմ թէ Ատենապետ էֆէնտին ինչպէս կը հասկընայ այս կէտը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս քանիցս բացատրեցի , կրկնեմ դարձեալ ժողովին կամացը կը թողու զայդ կէտը :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ. — Յաւալի է այնչափ երկար խօսիլ այնպիսի խնդրոյ մը վրայ , զոր կանոնադրութիւնն որոշած եւ լուծած է արդէն : Եթէ նորընտիր երեսփոխանաց սպասելու համար ժամանակ զոհելու կամ իրաւունք բռնաբարելու տեղի կը տրուի , ինչ որ ալ ըլլայ , կանոնադրութիւնը տրամադրած է . մենք ինչ ընենք :

Տ. ԱՄԲԲՈՍԻՈՍ Վ. — Իւթիւ ձեան էֆէնտին լուսաբանելու համար կ'ըսեմ թէ նորընտիր ե-

րեւոյնիսանաց հրաւիրուին ոչ թէ Գիւանի ընտրութեան այլ ժողովին աշխատութեանց մասնակցելու համար է, ինչպէս որ բացայայտ գրած է Կանոնադրութիւնը:

ՁԱՅՆԵՐ. — Գուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ խնդիրը լուսաբանուած կը կարծէք, քուէի դնեմ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Դուք, Ատենապետ էֆէնտի, ինչպէս կը հասկընաք Կանոնագրին այդ տրամադրութիւնը, կաղաչեմ՝ բացատրեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես արդէն բացատրեցի. եւ կրկին կրկին: Յաւալին այն է որ ժողովին մասնակի վերանորոգման համար Կանոնադրութեան պահանջած ընդհանուր ընտրութիւնը չ'է կատարված. եթէ ասի եղած ըլլար, այս խօսքերը տեղի չէին ունենար: Ասոր ալ պատասխանատուութիւնը ժողովին առջեւ գործադիր իշխանութեան է միայն եւ ոչ ուրիշ: Ալ խօսք չը կայ, քուէի պիտի դնեմ:

Անմիջապէս քուէի գրուեցաւ Մայր դիւանի կազմութեանն այսօր ձեռնարկելու կամ յետաձգելու խնդիրը: Սակայն քուէին արդիւնքը տարակուսելի ըլլալով, փորձը կրկնուեցաւ, եւ այս անգամ 15 ձայնի դէմ 17 ձայնով ՈՐՈՇՈՒԵՑԱԻ անմիջապէս Մայր դիւանին կազմութեանը ձեռնարկել:

Այս միջոցին ժողովը քառորդ մը դադար առնելէ ետեւ ժամն 9 ին վերստին ատենը բացուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ եւ ժողովը պահ մ'առաջ եղած վիճաբանութեան վերջ տալով իւր քուէովն որոշեց Մայր դիւանին կազմութեանը ձեռնարկել, սակայն երեւոյնիսանաց մէկ մասը մեկնած ըլլալով բաւական մեծամասնութիւն չ'ունի հիմա ժողովը. իսկական մեծամասնութիւն ունենալու համար 47 ներկայ պէտք է, մինչդեռ հաղիւ 31 մնացած է. մեծամասնութիւն չեղած ատեն դո՞նէ 24 ձայնից միաբանութիւն պէտք է մէկ ընտրելոյն վրայ. այսպիսի պարագայի մը համար Կանոնադրութիւնը կը տրամադրէ որ ներկայք՝ հաւանական կարծելով որոշող ձայնից միաբանութիւնը, կրնան փորձել ընտրել. կամ՝ եթէ հաւանական չը կարծեն՝ ընտրութիւնն ուրիշ նիստի կը

մնայ: Արդ կը հարցնեմ. ժողովը կ'ուղէ որոշող ձայնից միաբանութիւնը փորձել:

Ձայս ըսելով Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ, եւ 16 քուէով ընդդէմ 2ի, որոշող ձայնից միաբանութիւնը փորձել ՈՐՈՇՈՒԵՑԱԻ:

Ատենապետ էֆէնտին յայտարարելով թէ Ա. Ատենապետի միայն ընտրութիւն պիտի ըլլայ, հրաւիրեց երեւոյնիսաններն որ քուէին պատրաստեն:

Քանի մը նստարաններէ բողոքներ լսուեցան քուէարկութեան ձեռնարկուելուն դէմ, փորձն ապարդիւն պիտի ըլլայ ըսելով:

Քուէհամարի քննիչ կարգուեցան (վիճակաւ),

- Պահճէգաբուլեան Միհրան էֆէնտի
- Ղազարոսեան Գրիստոստուր էֆէնտի
- Մէրեթմ-գուլի Յարութիւն էֆէնտի
- Եէմէնիճեան Յակոբ էֆէնտի

Քուէարկութիւնը կատարուելով, քուէհամարի արդիւնքն՝ եղաւ.

- Թիւ քուէարկուաց 31
- Ստեփան փաշա Ասլանեան քուէ 19
- Կարապետ էֆէնտի Շահպազ » 8
- Յարութիւն պէյ Տատեան » 3
- Ռուսինեան էֆէնտի » 1

Հետեւապէս որոշող ձայնից միաբանութիւնը գոյանալով նիստն անբաւական համարուեցաւ, եւ այս կատարուած ընտրական գործողութիւնն իբրեւ չեղեալ նկատուելով, ըստ կանոնի որոշուեցաւ Յօրէն յաջորդ նիստը գումարել: Օրակարգ ունենալով՝

- Ա. Կազմութիւն Մայր դիւանին.
- Բ. Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց:

Ատենը փակուեցաւ ժամն 9 1/2 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱՊԵՏ
Ղ. Ս. ԱԼԱՍՏԵԱՆ ՌՈՒՄԵՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Եպիսկոպոս	Նար-պէյ	ԱՏԵՆԱՊԵՏ
2. Տ. Խորէն	Վ.	Կիրոյեան	ԱՏԵՆԱՊԵՏ
3. Տ. Ամբաստան	»	Խակէշտէրեան	
4. Տ. Գէորգ	»	Գերձակեան	
5. Տ. Ջաքարիա	»	Ջիւմրիւթեան	
6. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
7. Տ. Յովհաննէս	»	Փափազեան	
8. Տ. Ներսէս	»	Ասլանեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Արամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խասգիւղի	
13. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդանէս	»	Միջագիւղի	

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՏԵՆԱՊԵՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՏԵՆԱՊԵՏ
3. Արրահամ	Հարենց	»	
4. Ասափա	Իկիտպաշեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Փափազեան	»	
7. Մկրտիչ	Էսաեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գափամանեան	»	
10. Սարգիս	Աբրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնդիրեան	»	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ճախոշի իրիշանաւտան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ Ս.
Լուսաւորիչ Եկեղեցոյ բանկալը և Հայ գրաւիճարաց քով: